ԱՐԱՐԱՏ

ՏԱՆԴԻՍ

ԿԻՍԱՄԱՍԵԱՑ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՄՈՒՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Ե · ՏԱՐԻ · ԹԻՒ 11. 1862 ՅՈՒՆԻՒՍ 1.

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Փրկչաբար Սահմանադրութիւնը և դպրոցաց հաստատութիւնը ի՞րարու են Տաճկաստանի Հայոց վիճակը բարեկարգելու։

Ըստ իմ տկար կարծեաց՝ ի բաց հանելով մէկ քանի գաւառներ, միանեղուն վրայ ոչ մինչ ազդեցութիւն պիտի ընէ։ Վասն զի, փորձով հաստատուեցաւ՝ որ թէ՛ Սահմանադրութեան տետրակները և թէ՛ հրահանգները ոամկական ոճով անգամ թարգմանուելով կարելի չէղաւ քիչ շատ լուսաւորեալ տեղուս ժողովրդոց անգամ գաղաբար մի տալ, հապա ո՞ր Թողունք այն փիւրիտանի պէս ևայլն տեղերը, որք ոչ թէ միայն լեզունին կորնցուցածեն՝ այլ մոդաւայել քանակութիւնն ալ, ասոնցմէ եթէ խօճապաշ ըսուած անխղճմտանքները խեղճ ժողովրդեան վրայ անանկ գազանական ազդեցութիւն մը ստացեր են՝ որ ինձ անկարելի կը թուի՝ թէ ոչ իսկ Սահմանադրութեան Օրէնքը կարող պիտի ըլլայ զանոնք Ազգային գործերէ հեռու պահելու. քանի որ աս ասանկ է և քանի ալ որ շատ գաւառներու մէջ խօճապաշ էնէրէն՝ էզատ խորոմանկ մարդիկ չէ հնար գտնուիլ. անտարակոյս անոնց մէկ երկուքը իւրեանց միամիտ ընկերները յաղթելով, լաւ ևս է ըսեմ խաբելով, ոճիրները անխիղճ պիտի գործադրեն. քանի որ հին դրութեամբ գրել կարդալը անուշնուշ հոգևորականաց կը պատկանի նէ, և քանի որ անոնց սարտ է արդարութիւնը պաշտպանել... էհ, ինչ պէս պաշտպանեն, քանի որ իրենք ալ չեն գիտեր, քանի որ անօրէնը օրէնք

չի սիրեր և քանի որ գիտցեր են Սահմանադրութեան իրենց տուն ալրիչը լինիլը, Հայը. այս հոս Թողով անցնիմք դարոցայց վրայ խօսելու։

Ազգին ապագայ բարեկարգութիւնը նոր սերունդը կրթելուն վրայ կը կայանայ, նուիրական պարտականութիւն մ'է իւրաքանչիւր ազգասէրներուս, որ իրենց ուշադրութիւնը այս կարևոր իրին վրայ դարձնեն. ո՞վ կրնայ ուրանալ որ Ազգի մը ապագան մայրերուն գործն է, — և ոչ մէկը. — ուրեմն քանի որ անուրանալի են ո՛ր են ան մայրերը (խօսքս մանաւորի չէ) որ զաւակներուն կաթին հետ 'ի միասին, դաստիարակութեան մուզիչ հիւթն ալ ծծեցընեն. դժբաղդաբար ոչ թէ այն, այլ ընդհակառակը ամեն մոլութեան, անկրթութեան, չարութեան ևվնասակար իրաց դահեակ ըլլալով և վերջապէս իրենց գործածէն ու մեծցուցած օձերէն իրենց ալ համբերութիւնը հատնելով կը հրեն կը ձգեն դարոց, և այն ալ ոչ թէ կրթելու նպատակաւ այլ զոնէ օրին մէկ մասը իրենցմէ հեռի Թողելու համար. ահա ասա նպատակաւ կ'աշակերտանայ դրպրոցին նոյն տղան. և ենթադրենք ալ թէ դպրոցը բարեկարգ է և ուշիմ դաստիարակի յանձնուած, որ ըստ մեծի մասին. . . . Բայց ի՞նչ կարող է ընել դաստիարակը, քանի որ իրեն յանձնուածը մարդակերպ անասուն մի է, Թո՛ղ ընէ ի՞նչ որ կրնայ, բայց ի՞նչ պիտի ազդէ անոր վրայ, քանի որ տղան քսան և չորս ժամէն շատ շատ ութը ժամը վարժապետին քովն է, անոր կը լսէ, ան ալ մինակ մարդ մ'է հազարու մէկ հոգերով բեռնաւորեալ. ու մնացած տասն և վեց ժամը իւր ծնողացը տունը անոր հակառակը կը տեսնայ, կը լսէ, կը սորվի, և արդէն ալ անոր հակամիտեալ է։

Ուրեմն այս տկար վիճակերով հասնելու համար որ մեր վերնագրով եղածնիս հիմակու հիմա օգուտ մը չենք կրնար յուսալ։ Հապա ի՞նչ միջոց բռնելու է մեր գաւառաբնակ ազգայնոց ցաւալի վիճակը բարեկարգելու, ահա խնդիրը հոս է, և ասոր ալ սպեղանին սա ըլլալ կը Թուի. եթէ կան մեր գաւառական սիրելի ազգին մէջ ճշմարիտ ազգասէր, անցնուրաց ուսումնական, և քաղաքագէտ ազնիւ անձեր՝ Թո՛ղ կեդրոնական վարչութիւնը անոնց հրաման ընէ ու պահանջէ և երկամտութեամբ լսէ իւրաքանչիւրին իրենց գաւառին հանգամանքը, եկեղեցականաց վիճակը և ևն. և դառնայ անոնց տուած տեղեկագիրներուն վրայ հասուն խորհրդածութիւն ընէ. և որ գաւառին մէջ որ դժբաղդաբար չի գտնուի նոյնը ընող անձի՝ Թո՛ղ հաճի վարչութիւնը իւր կողմանէ յատուկ պաշտօնեայներ ուղարկելով անոնցմէ տեղեկանալ. ու անկէ ետքը դառնայ այն շատ մը առաջնորդական պատկառելի անունը իւրեանց պատրուակ ընելով գրաւած տեղերնին ներքև ընող վարդապետ և եպիսկոպոսները վերցնէ ու վանքերը ցրուէ, որ երկան իրենց վախճանը ակնկալեն. ու անոնց տեղը իրկէ ազգասէրները ու պիտանիները ուրոնց յարդը լաւ մը ճանչցուած ըլլալուն համար Եւրոպիոյ մէջ հաստատուեր են, և որոնք ալ Կ. Պօլսէն դուրս ելլալ չեն ուզեր. եթէ քիչ-մը այս դիւցազունքը հոգէ, անոնց մէկը հազար անպիտանին բաւական է. ի՞նչ չահ աւելն գաւառ մէկ մէկ անպիտան և որմայեան առաջնորդ կենալէն՝ քանի որ ազգին օգուտ մը չունին, Թողլ միանան չորս—հինգ, աւելն շատ վիճակներ ու մէկ առաջնորդի մը հանձնուին. (երբեմն է այն վիճակը որ տարիէն աւելի մը արդիւնաւոր առաջնորդի մը հայրական խնամքը կը վայելէ). անոնք իւրաքանչիւրը իրենց քաղաքաց, գիւղաքա-

ղաքաց և դիւղից վրայ միշտ Թո՛ղ չըր-
Ջադային , և վարչութեան կառավարու-
Թիւնը չի խանգարուելուն հակեն . միւս
կողմանէ ալ Սաղիմայ , Կ· Պոլսոյ , կար-
Նոյ , Վանայ մէջ հաստատուած և հաս-
ուստուելիք ժառանգաւորաց դպրոցնե-
րը իրաքանչիւր գաւառին հարկաւորա-
ծին չափ պատանիներ Թող կանչեն ու
Հետզ Հետէ արժանաւոր վարդապետ-
ներ ու քահանաներ Հասցընելով տե-
ղւոյնին դարցընեն , չեմ օխալիր կար-
ծեօք եթէ ըսեմ , Թէ այս ընթացքով
տասը տարիէն ետքը Հոգևորականաց
չատէն ազգիս կրած նեղութիւնները կը
դադրին , ու հիներն ալ աստիճով կը
Հատնին , և եթէ միան ալ Թիւերնին
քիչ ըլլալով անկարգութիւննին ալ կը
նուազանայ ։

Դպրոցներուն գալով չեմ ուզեր
ըսել Թէ երբեմն գաւառներու մէջ
բացուած բայց անպտուղ և չատերուն
մէջ բնաւ բան մը չեղած դպրոցները
գոցուի և չի հաստատուի . ո՛չ , միայն
ինչպէս որ ըսինք , քանի որ տղայք ծը-
նողքներէ չեն կրնար կրթուիլ , դպրո-
ցին մէջ առած կրթութիւնն ալ ըն-
տանեաց կենցաղավարութեան մէջ կ՛ո-
ջնչանայ և որ առաւել վնասակարն է՝
չիկայ գաւառական դպրոց մը որ ծնողք
նոր օրինաց հնազանդին , այլ ուզած ա-
տեննին կը խրկեն տղան դպրոց և չու-
զած ատեննին ետ կը կանչեն . ուրեմն
ազգային լոգգրաց մէջ " սատեղ դըպ-
րոց բացուեր է ' նա տեղին դպրոցին
քննութիւնը եղեր է ,, լուրերն տեսնե-
լով մեծ բանի մը տեղ չի դնեմք ու ա-
պագային վրայ յոյս ունենալնիք . վասն
զի այս բարի դրգիռը գրեթէ քանի տա-
րիէն աւելի է մեր գաւառական սիրելի
ազգայնոց մէջ կը տեսնուի , և շատ
ալ դրամ կը վատնուի , ո՛ւր է անոնց
մէկ կատարեալ պտուղը , ո՛վ տեսաւ .
արդեօք ո՞ր խորշը կը գտնուին սա լու-
սաւորեալ ժամանակին գրական աղատ
ասպարէզին մէջ ոչ ոք կը տեսնուի . ա-
նանկ էնէ այս ալ դարմանի կը կարօտի,
և այս դարմանն ալ Կ· Պոլսոյ կեդրոնա-
կան վարչութենէն և ուսումնական ազ-
նիւ խումբէն կ՛ակնկալենք այսպէս ։

Ուսումնական խորհուրդը արդէն
խոստացածը ժամանակին գործի դնելով
և այս առթիւ Ռսկանեան մեծատուիւ
ուսումնականին խօսած ճառը չմոռնալով
հաստատուած դպրոցներուն վրայ խը-
նամք Թող տանի և անհաստատներն
ալ Թո՛ղ հաստատէ , մենք դարձեալ
օրքան որ ձայն ունիմք կը պուռանք . քա-
նի որ գաւառական Հայոց մէջ ըստ մե-
ծի մասին կրթեալ ծնողք կը պակսին ,
հնար չէ այն տեսակ միջոցներով , ազ-
գայնոց երկու սեռ զաւակունքը կրթել
և ապագային մէջ անոնցմէ բարիք քա-
ղել , ամէն մէկ քաղաք , ու գիւղաքա-
ղաք իւրեանց կարողութեանը ներածին
չափ դիւերօթիկ ծաղկոցներու կը կա-
րօտի · որ ծնողաց գաղափարներէն հե-
ռու անոնց մէջ պատապարած նոյն տե-
ղի աղգայնոց երկու սեռ մանկունքները
զատ զատ . և ամէն գիւղէ ալ բաւա-
կան աղջիկ և մանչ տղայք ՚ի միասին .
անոնց դաստատուները ըլլան իբրև մայր ,
Հայր և դաստիարակ (մոքերնիս աղէկ
բացատրելու Համար պարզ ըսեմ կա-
րելի է չի Հաւատացուի) անոնք սովրե-
ցընեն մանկանց ինչ որ պէտք է սորվիլ ,
քառասնօրեայ մանուկ մի մինչև իւր կա-
տարեալ Հասակին · Հանդերձ Հայկա-
բանական գրաւարժութեամբ ինչպէս
որ վարիկ ծաղկոցի մը , և անոնց ա-
մէնն ալ մէկ Հրահանգի ու մէկ ՏԷՒ-
պէ վրայ , որ ժամանակ այս ծաղկոց-
ները պատրաստ ունենան ուսումնարա-
նի արժանաւոր աշակերտներ , այն ա-
տենը կառուցուի երկու սեռին Համար
յատուկ գիշեր օթիկ ճեմարանները՝ ա-
մէն երկու երեք գաւառին միջին կեդ-
րոնը որ տեղ որ յարմար տեսնուի .
և հաւքաւին նոյն ծաղկոցաց դպրու-

թիւնը աւարտող մանկունք կարևոր ուսմանց վարժուելու, ի՛նչ ատեն որ աս ուսումնարանները կարողանան պըտուղ հասցընել, անկե վերջը կարգը պիտի գայ . . . բազմաթեզու կամ ազգային համալսարաններու ի՞ . ահա այս դրութեամբ մօտ ժամանակի մէջ և վստահութեամբ կ'ըսեմ որ ներկայ անպատուղ ծախսուած դրամովը 4—5տասրիւն վերջը ազգը հսկայաքայլ յառաջադիմութիւն կ'ունենայ, ու կատարեալ հայերը ու հայերը ունենալով դիւրութեամբ կարող կ'ըլլան զաւակները նին կրթել, ու ազգին ականաւոր ազգասէր և ուսումնասէրներն ալ այս ծախնըը հոգէն աղատելով ազգերնիս է՞ր անուան արժանաւորել. մինակ ալ այս չափով չենք բաւականանար մեր խորհրդածութիւնէն :

Մեր ազգը 4—5 միլիոն կը հաշուի . (պատկառելի ուսումնականին մէկը ըսածէր թէ " կը փափաքիմ ամենը մէկ տեղ հաւաքուած տեսնել " գոհութիւն Աստուծոյ այս օրերս մօտա եղած ազգային հանդեսներու մէջ մէկ քանի հազարը մէկ տեղ գումարուած տեսնողներ եղաւ) ես կը հաշուեմ 4—5 միլիոն, բնութիւն, այնքան ձիրք, այնքան գաղափար, այնքան կարծիք, այնքան լեզուի տարբերութիւն, ըսեմք այնքան ալ գրչի անմանութիւն (վասն զի եթէ ամենն ալ գրել գիտնան անտարակոյս տարբեր ալ պիտի ըլլան) կը ներուի՛ մեզ ըսել որ եթէ ազգերնիս այս օրինակ գպրոցական միակերպ և դիւրօթիկ ծրագրով, ուսումնարան և ճեմարան ունենայ՝ անշուշտ տասը տարիէն վերջը միաբերան, միակարծիք, միագաղափար, միադրիչ, և միախորհուրդ ժողովուրդ մը կունենանք, և անկե վերջը կարգը կուգայ Սահմանադրութեան փրկութեան օրինաց գաւառներու մէջ ըստ պատշաճի գործադրութիւնը :

Ահա այս է մեր կարծիքը ազգերնուս ապագայն բարեկարգելու և Սահմանադրութիւնը արժանաւորապէս գործադրելու, ու ազգայնոց գպրոցներու համար ըրած մեծագումար ծախքերը արդիւնաւորելու միջոցը, բաց յայսկից և ոչ ինչ . եթէ թերի է մեր խորհրդածութիւնը կամ սխալ՝ թո՛ղ հերքուի հրապարակաւ որոնցմէ որ անկէ, և մեք պարտաւոր եմք ամէն արդար խորհրդածութեան առջևը խոնարհելու . ու թէ որ ստոյգ է և կարևոր, ո՛չ թէ սոսկ իրաւունք տրուի այլ գործադրութեանն ալ հոգ տարուի կարողութեան տէր ազգայիններէ .

Փափաքելով որ մեր այս դուշնաքեայ աշխատութենէն ամենասիրելի Աղգիս օգուտ մը ծնի . . . :

Մնամ հիշտ ՚է պարծանս
Հայուհեան անդնանուէր :
Յ. Ս. Քու-բէձեանօֆ :

ԱՒՕԳԱՆԻ

ՄԱՐԴԿԱՆՑԻՆ*

ԿԵՆԱՑ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ

Մինչև հիմայ յառաջ բերուած օրինակներէն կը հասկցուի որ Մալթիսի ժամանակ, Յունաց և Հռովմայեցւոց մէջ կենաց տևողութիւնը ճիշդ այսօրուանին նման էր և հետևաբար երկրագնտիս տարիքը քանակաց տարիքին վրայ քնաւ ազդեցութիւն մը չունի, բայց հողին մշակութենէն և կլիմայից տարբերութենէն : Ինչպէս որ արդարև այսօր Իտալիոյ մէջ Վեսբասիէնի տերութեան ժամանակին նման այնքան երկայնակեաց

*Տես Թիւ 10 երես 128:

մարդոց օրինակներն չտեսնուիր : Վասն զի այն ժամանակը սոյն երկրին մէջ դանուող անտառները զանի շատ ցուրտ կլինայ մը կը յօրինէին , և հետևաբար հոն ապրողներն ալ աւելի դիմացկուն էին * : Այս ալ շատ հաւանական կերևի որ մեր երկրագնտին բուն իսկ տաքութիւնը իր ամեն մէկ մասերուն մէջ կը պատճ յաջորդութեամբ և հետևաբար մէկ կէտէն միւս կէտին մէջ աւելի կը ժողովի :

Ուստի իրաւամբ կրնանք հետևցնել որ մարդկի առաջուան պէս այսօր ալ այնքան երկայն ատեն կրնան ապրիլ և կապրին , սա տարբերութեամբ միայն , որ այսօր առաջուց նման երկայնակեցութեան օրինակները շատ պիտի չկրնանք գտնել :

Վասն որոյ դարձնենք մեր ուշադրութիւնը քիչ մ՚ալ մեզ ժամանակից եղող ամեն տեսակ մարդոց կենաց տևողութեանը վրայ և տեսնենք թէ ի՞նչ հետևութիւն և ի՞նչ տարբերութիւն պիտի գտնենք :

Սկսինք նախ մեծերէն , Թագաւորներէն : Բնութիւնը որ անոնց ամեն կերպ երջանկութիւնները , ուրախութիւնները , ամեն տեսակ պիտոյքները լիօրէն պարգևեր է , տեսնենք թէ երկայնակեցութեան չնորհն , իր ամենամեծ պարգևն ալ չնորհած է . դժբաղդաբար ոչ , այս դաս մարդոց մէջ երկայնակեցութեան օրինակներ չենք կրնար գտնել ոչ հին և ոչ նոր պատմութեան մէջ : Հին և նոր Թագաւորաց մէջ ամենէն աւելի ապրողներն մինչև ութսուն տարի է և այս ալ շատ քիչ անգամ : Հռովմայեցի և Գերմանացի Թագաւորաց այն անհամար ցանկին մէջ ինչպես Օկիւսեթէն մինչև այսօր , որոնց թիւը մինչև երկու հարիւրի կմօտենայ , իրմէ այսինքն Օկիւսեթէն և Թիպերեէն զատ միայն չորս Թագաւորներ կրնանք գտնել , որոնք մինչեւ ութսուն տարի ապրած ըլլան , այսինքն Հարիւր երկու կամ երեք , որոնք էին Զօռտիէն , Վալէսիէն , Անաստաս և Ժիւսթինիէն :

Օկիւսեթ որ մինչև եօթանասուն և վեց տարի ապրեցաւ , բարեխառն և հեղաբարոյ անձ մի էր , բայց և այնպէս աչխոյժ , բուռն և փոյթ էր ամեն գործոց մէջ , և որչափ որ ամեն տեսակ հեշտութիւններէ հեռու էր ալ նէ , այնքան աւելի կսիրէր գիտութիւնք և արուեստք : Անմեռապարզ կերակուրներով իր մարմինը կսնուցանէր , մինակ անօթի եղած ատենն կուտէր , և հարիւր տրամէ աւելի գինի չէր խմեր . սակայն սա միայն կինտուէր որ կերակուր ուտելու ատենն ուրախութեամբ անցնէր . ինքն ի բնէ երջանիկ և միշտ խնդուն երես էր , և մեռնելէ մէկ քանի վայրկեան առաջ արտասանած սա հետևեալ խօսքերն " Ծափահարեցէք բարեկամներս , կատարեցաւ վերջացաւ , կ՚յայտնեն թէ ի՞նչ կմտածէր բոլոր իր կենացը մէջ : Մտքի հանդարտութիւնը ինչպես Օկիւսեթինը մարդս երկայնակեացընելու առնէն յարմար միջոցն է : Երբ երեսուն տարեկան էր , Օկիւսեթ այնպիսի ծանր և վտանգաւոր հիւանդութենէ մը զարնուեցաւ , որուն ապրելուն վրայ յուսահատեալ էին ամենքն ալ : Զգայնի այնպիսի հիւանդութիւն մի ունէր էր , որուր բժշկաց պատուիրած տաք բաղնիքներն աւելի կծանրացնէին : Այն ատեն Նիւղա , բոլորովին հակառակ դրութեան հետևիլ որոշեց : Ըստ որում պաղ բաղնիքներու սովորութիւն ընել տալով , վերջապէս դինքն առողջացուց :

---

*Ինչպէս նաև կը պատմէ Բլին թէ այնպիսի ձմեռներ եղած է որ , Հռովմայ մատուռներու մէջ պահուած գինին և Թիպերիայ ջուրը բոլորովին սառած է : Այս պատմութեան ստոյգ ըլլալուն անհամար փաստեր կան :

Այս հիւանդութիւնը և Օկիւսթին ապրելու եղանակը անտարակոյս զինքն երկայնակեաց ընելու քիչ յարմար էին :

Թիպէռ կայսրը , իր նախորդէն երկու տարի աւելի ապրեցաւ բուռն բնաւորութեան տէր , հեշտասէր , բայց ամէն բանի մէջ բարեխառն և չափաւոր և մինչև անգամ իր ամենազգայուն ուրախութեան մէջ , իր առողջութիւնը չմոռնալով , ամենայն կերպով կինամէր : Այսիկայ սովորութիւն էր ըրած ըսելու Թէ , յիմար է ան որ երեսուն տարեկան եղած ժամանակը դեռ իր բժիշկներուն խորհուրդ կհարցնէ Թէ ի՞նչ կերակուրներ ուտէ , վասն որոյ մինչև այս տարեկան եղողն պէտք էր դիտնալ փորձառութեամբ ինչ որ իրեն աղեկ կամ դէշ էր :

Երևելին յաղթող Օրանկզեպը , իրաւ է որ մինչև հարիւր տարի ապրեցաւ , բայց պէտք չէ զանի իբրև Թագաւոր նկատել , այլ Թափառական ժողովուրդի մը իբրև պետ :

Արդի դարուց Թագաւորաց և իշխանաց մէջ շատ քիչ օրինակներ կան երկայնակեցութեան կողմանէ : Գաղղիոյ Թագաւորաց մէջ միայն Պուռպոնի ցեղն խոստումնալից կընկեն , որովհետև ասոնց մէջէն երեք անձանց օրինակներ կան որ հետզհետէ եօթանասուն տարի ապրած են :

Նոր պատմութեան մէջ գտնուած ամենէն գլխաւոր օրինակներէն մէկն յիշելու չմոռնանք , այսինքն Ֆրեսերիկ Բ , ը : Այս իշխանը ամէն բանի մէջ մեծ էր , Թէ՛ բարոյականի և Թէ՛ մարմնոյ ուժի կողմանէ : Ոչ միայն եօթանասունևվեց տարի ապրեցաւ , որն որ շատ քիչ անգամ կտեսնուի Թագաւորաց մէջ , այլ աւելի զարմանալի կէտն սա է Թէ , ամէն տեսակ նեղութեանց և անտանելի տանջանաց տակ ընկճուելէն , քանի տարի շարունակ պատերազմելէն յետոյ , սա ալ չմոռնանք յիշելու Թէ այնչափ տեսնի մէջ ոչ Թէ իբրև Թագաւոր ժամանակ անցուց , այլ իբրև սոսկ զինուոր , վերջապէս ամէն գործի մէջ կգտնուէր , և երբ զինուորները կը հանգստանային , ինքը դիւերներն ալ կլուսցնէր և նոր միջոցներ կհնարէր : Նոյնպէս կղերին Այրն աստիճանի գտան ալ Թագաւորաց նման երկայնակեցութեան յարմարութիւն չունի : Սուրբ Պետրոսի յաջորդներուն մէջ՝ որ մինչև այսօր երեք հարիւրի կհասնի հազիւ Թէ հինգ միայն կգտնուին , որոնք մինչև ութսուն տարի ապրած են : Բայց և այնպէս անապատականաց և կրօնաւորաց դասուն մէջ երկայնակեցութեան զարմանալի անթիւ օրինակներ կան , որոնք ժուժկալ , անձնուրաց , ամէն տեսակ հեշտասիրութենէ հեռու , գոհ կեանք մը կվարեն . զոր օրինակ՝ սուրբ առաքեալն Յովհաննէս ինիսուն երեք տարի ապրեցաւ , և սուրբ Պողոմն հարիւր տասներեք , որն որ իր կեանքը այրի մը խորը անցուց , այնպիսի սաստիկ և անհատատալի ժուժկալութեամբ : Ս. Անտոն հարիւր քսաներեք : Սուրբն Ամբակում ութսունէն աւելի : Այս տեսակ օրինակներ շատ քիչ են մեր օրերուն մէջ :

Փիլիսոփայներն ալ ընդհանրապէս ի վաղուց անտի երկայնակեաց եղած են , մանաւանդ անոնք , որոնք իրենց կեանքն ու նպատակն բնութիւնը հետազօտելու տուած են , որովհետև այսպիսի ապրելը կարևոր և օգտակար ճշմարտութիւններն յայտնելով երկնային զուարճութիւն մը կպատրաստէ : Այսպիսի ուրախութիւն , ուրախութեանց ամենէն գերազանցը , առողջարար դրդումը , տեսակ մը մնունդ , մարդիկ երկայնակեաց ընելու ամենէն յարմար միջոցն է : Ամենէն աւելի շատ ապրող փիլիսոփայները են Սահակիկեանք և Պիթակորեանք ,

որոնց դրութիւնն է կիրքերը սանձել, մէկ խօսքովամենայն ժուժկալութեամբ ապրելն սովրեցնել։ Արդէն յիշեցինք Բլաթօնի և Իզօքրատի օրինակները։ Աբօլնիւս որ Քիան կարգէ դուրս, թէ՛ բարոյականի և թէ՛ մարմնոյ առողջութեան կողմանէ, ըսր քրիստոնեայք, մոգ, և կռապաշտք չաստուած կկոչէին և Բիթագորի նման ժուժկալ էր կերակրոց կողմանէ և շատ կսիրէր ճամբորդութիւնը, որով մինչև Հարիւր տարի ապրեցաւ։ Քսէնօֆիլ, նոյնպէս Բիթագոր Հարիւր վեց տարի ապրեցաւ։ Տօմնաքս, որն որ նոյնչափ ապրեցաւ, բուռն և սաստիկ բնաւորութեանց տէր, մեռնելու աւենն հարցուցին իրեն թէ ի՞նչպէս կուզէ որ զինքն թաղեն։ Իմ մարմնոյս համար մի՛ անհանգիստ ըլլաք, պատասխանեց, բնութիւնը գիտէ ինչպէս ընելն. բայց աւելցուցին իրեն բարեկամները, թէ կուզե՞ս թռչնոց և շանց կերակուր ըլլալ։ ինչո՞ւ համար ոչ պատասխանեց, որչափ որ ապրեցայ, շատ նայի ուրիշներուն օգտակար ըլլալ, ուստի և ինչո՞ւ համար մահուանէս եղբը անանոց կարելի եղածին չափ օգտակար չըլլամ։

Փիլիսոփայք այս դրութեանը մինչև նոր դարուս աւենը հետևեցան։ Բիթագորեր և Պաքօն բաւական երկայնակեաց են։ Ղեվքօն, որուն ուրախութիւնն էր միայն իմացական զբաղմունք, որոյհամար կխոսին թէ մինչև մեռած աւենն կանանց հետ և ոչ մէկ յարաբերութիւն մը ըրած էր, և ապրեցաւ հինհուսուն տարի։ Էօկէս զարմանալի գործուներայ անձը և երեք հարիւրին աւելի գործոց հեղինակ, մինչև հինհուսուն տարի ապրեցաւ։ Նոր փիլիսոփայից աւենէն մեծը, երեւելին Բան, իր վրայ փորձեց թէ ոչ միայն փիլիսոփայութիւնը մարդուս կեանց տևողութիւնը երկարելու կօգնէ, այլ և կքաջալերի և հետևաբար բոլոր իր շուրջը գտնուածներն կհետաքրքրէ։

Ակաթեմեանք երևելի են երկայնակեցութեան կողմանէ։ Ինչպէս Ֆօնթենէլլ և Ֆօրմէյ, հինհուսուն տարի ապրեցան, երկուքն ալ միտնջենաւոր աւենսգիրը էին, մէկը Փարիզի և միւսն ալ Պեռլինի գիտութեանց ճեմարանի։

Դատիարակաց մէջ ալ երկայնապրողներու օրինակներ կան. որն որ կը հաստատէ թէ տղայոց հետ ժամանակ անցնելն զմարդ կերիտասարդացնէ և անոր դոյութիւնը կերկարէ։

Երկայնակեցութեան Աստիճանին մէջ դասելու է Դերասանք և Բանատեղծք, մէկ խօսքով, այս բախտաւոր արարածները, որոնք անդադար իմացական ուրախութեանց մէջ զբաղելով և իրենց կեանքը գրեթէ տեսակ մը գեղեցիկ երազի նման կանցնի։ Ինչպէս են Աֆաքրէօն, Սօֆօքլը, Բհատտ, Եունկ, Վոլթէռ, Պօտմէռ, Հալէռ, Մեթաստաս, Կլիմ, Ոսթղ և Էօզըռ։

Բայց ասոնցմէ աւելի երկայնակեցութեան զարմանալի օրինակներ տեսնուած են և կտեսնուին քայ օդին մէջ աշխատող փիզիքապէս հոգնող մարդոց մէջ, վասն զի անոնց կեանքն է պարզ և բնութեան յարմար։ Ինչպէս են գիւղացիք, պարտիզպանք, ձկնորսք, զինուորք և նաւաստիք։ Այս տեսակ մարդոց մէջ է որ այսօր մինչև Հարիւր քառասուն և յիսուն տարի ապրող կան։ Հետևեալ օրինակներն ալ բաւական օգտակար են մեր խնդրոյն։

1670 ին, Հ. Ֆէնքէնա Անգղիոյ Եօրքի կոմսութեան մէջ մեռաւ։ 1513 ին Ֆլօրէնթիլտի պատերազմին մէջ գրտնուեցաւ, որ Հաղիւ տասներկու տարեկան էր։ Դիւանատանց և զանազան դատաստանատեղեաց արձանագրութիւններն կվկայեն որ Հարիւր քառասուն տարեկան եղած ժամանակը շատ գործերու մէջ կգտնուէր։ Ֆէնքէնա Հաղ-

իւր վաթսուն ևինը տարեկան մեռաւ ։ Եւ իր վերջին օրերուն մէջ գործած արհեստն էր ձկնորսութիւն և դեռ բաւական ուժ ունէր լողալու ։ Վերոյիշեալ օրինակին ամենէն մօտն է Թովմասբառաձին , աղքատ գիւղացին որնոր իր ձեռաց աշխատութեամբ ապրելու ստիպեալ էր ։ Հարիւր քսան տարեկան եղած ժամանակը երկրորդ անգամ կարգուեցաւ այրեի մը հետ , և որուն հետ տասն երկու տարի ապրեցաւ առանց իր տարիքը յայտնելու ։ Մինչև հարիւր երեսուն տարեկան եղած ժամանակը իր տանը վերաբերեալ ամեն մէկ պիտոյքը իր ձեռքովը կմատակարարէր , մինչև անդամ ձորձնին ինքն կծածկէր ։ Մեռնելէն մէկ քանի տարի առաջ հազիւ թէ քիչ մը թէ՛ յիշողութիւնը և թէ՛ աչուընէրն տկարանալ սկսան ։ Բայց մինչև վերջի վայրկեանն աղեկ կլսէր և երիտասարդութեան ժամանակին նման կրնար ամեն բան խօսիլ ։ Անդրնացոց նոյն ատենին Թագաւորը երբ այսպիսի մէկին գոնուիլն լսեց , Լօնտրա բերել տուաւ , որ այն տանէն հարիւր յիսուն երկու տարեկան էր ։ Այս ճամբորդութիւնը կարելի է որ իր կեանքը համառօտեց , վասն զի այնքան հեշտութեամբ և փափկութեամբ Թագաւորն զինքն պահեց , որնոր իր հայրենիքը վերադառնալէն շատ քիչ ատենէն հոգին մեծաւ 1535ին և մեռաւ ի հասակի հարիւր յիսուն ամաց և հինն ամսոյ . այսքան ժամանակ ինը Թագաւորաց յաջորդութիւնը տեսաւ Անգղիոյ մէջ ։ Սա ևս զարմանալի է որ , երբ Հաուվէյ մարմինը բացաւ , և ոչ մէկ կէտի մը վրայ խոց տեսաւ , կուրծքին ոսկորներուն ծայրի կռճիկներն իրենց բնական վիճակը պահած էին , ինչպէս որ ընդհանրապէս ծերութեան ժամանակ ոսկորն կվերածուին , անանկ որ իր մարմինը հիւանդութեան և ոչ մէկ սերմն կպարունակէր , և մեռնելու պատճառն ալ մէկէն ի մէկ այն աստիճան հեշտութեան , վափկութեան և առատութեան մէջ ապրելէն յառաջ եկած արեան չաստութենէն և թանձրութենէն էր ։

(Շարունակելի) ։

ՕԳՏԱԿԱՐ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Խօսակցութիւն ԺԲ ։

1 . Գիշեր ժամանակ , մանաւանդ լուսին եղած ատեն , կերակուրէ ետքը պտտելուն աղէկութիւնը ի՞նչ է ։

— . Ոչ միայն գիշեր ատեն , այլ ամեն անգամ կերակուր ուտելէ վերջը հանգարտ պտտելն շատ աղէկ է , զի մարսողութիւնը կդիւրանայ , ուստի պէտք չէ համոզուիլ կամ կարծել որ միայն գիշեր ատեն պտտելն օգուտ է , որովհետև պտտելն է օգնողը և ոչ թէ գիշերը ։ Հոս ահա յարմար կը սեպեմ գիշեր ատեն պտտելու վերաբերեալ մէկ քանի խօսք ընել ։

Ամառ եղանակին ամեն տեղ սովորութիւն եղած է գչերնելն պտտել . որուն նպատակն է միմիայն զովանուլ զի եթէ առողջական ըլլար նպատակը , ոչ միայն կիւրակէ կամ շաբաթ և լուսին եղած գիշերներն ըլլալու էր , այլ ամեն գիշեր ընդհանրապէս . ուստի այս կերոյ պտրտելէն յառաջ եկածը մի միայն վնասէ , զի շատերն քիչ մը պտրտինք ըսելով միչև հինգ վեց ժամ շրջունակ կհոգնին , մաքուր և չզով օդ ծծելու տեղ քոլորովին փոշի կշնչեն , մարմինը իր մաքրութիւնը կը կորանցնէ և վերջապէս յետին աստիճան հոգնած և ուժաթափ տուն կմտնեն , և հազիւ թէ քիչ մը գնանա , կլուսնայ , ուակից վերջը գնանալն և ոչ օգուտ մը

ունի մարմնոյն հոգնութիւնը առնելու ։

Գնահատել ժամերն ալ կանոնաւոր ըլլալու են , գիշերը կանուխ պառկելն ու առաւօտուն ալ նոյնպէս կանուխ ելլելը շատ օգուտ ունի մարդուս ։ շատերը գիշեր ցորեկի և ցորեկն ալ գիշերուան կխոխեն , որ շատ գէշ հետեւութիւններ ունի ։ Ս. գրութեան մէջ մարդս կըլլայ արեւուն , գլուխը թեթեւ և գործունեայ , իսկ բ. ին մէջ ծուլամորթ , տկար և հետեւաբար ծոյլ , որ է մայր չարութեանց ։ Ասկից կը հետեւի որ առողջաբանութիւնը ոչ միայն ֆիզիկապէս օգնէ մարդուս , այլ և բարոյապէս ։

2 · Մարմինը ֆիզիկապէս ուժովցնելու համար ի՞նչ պէտք է ընել ։

— · Մարդս իր մարմինը ուժովցնելու համար զանազան կրթութիւններ ընելու է , և երանի թէ տղայական փափուկ հասակէն սովորի , ինչպէս ոտքով ճամբայ ընել , վազել , ցատկել , պարել , զանազան մարմնամարզութեան (ժիմնաստիք) վարժեցնել մարմինը ։ Սոնցմով մարմինը կուժովի , միսերն կամծնան , ջիղերը կզօրանան , ոտոնցմով բոլոր կազմուածքը , կատարելութեան վիճակը կստանայ ։

3 · Ընթերցանութիւնը ի՞նչ օգուտ կրնէ առողջութեան ։

— · Ընթերցանութիւնը , որ պէտք է ընդհանրապէս պարապոյ և ժամերու մէջ ընել , մարդուս միտքը կհանգարտի , սիրտը կխաղաղի , որոնցմով հոգնութիւն առաջ կըլլայ մարմինը ։ Բայց գիտնալու է որ ընթերցման նիւթերը մեծապէս կազդեն , ուստի պէտք է ամենայն զգուշութիւն ընել ընտրութեան ժամանակ ։ Ա.յն զանազան սիրաւէպը և կեղծ վիպասանութիւնը բոլորովին կվնասեն . զի ինչպէս որ գժաւարամարսը կերակուրը , ստամոքսին վնասելով , արիւնը կտաքցնէ , նմանակ ալ այնպիսի գրեանք մարդուս սիրտը կխռովեն բարոյականը ապականելով ։ Ազգայ պատմութիւնը , սովորութիւնները , երեւելի անձանց վարքը , ճանապարհորդութիւնք , բնութիւնը սովրեցնող ուսումնական բայց պարզ գրեանք , օգտակարն ընդ գուարճելոյն խառնեալ , առանց վնասելու , մեծապէս կօգնեն առողջութեան ։

Խօսակցութիւն ԺԹ ·

1 · Կերակուր մը դիւրաւ մարսելու համար ի՞նչ պէտք է ընել ։

— · Պէտք է կամաց ուտել , աղեկ ծամել , ժամանակ ժամանակ ջուր խմել ։ Ըմպելեաց տեսակին մէջ ամենէն առողջարարն է ջուրը , մանաւանդ երբ պաղ , ղով , մաքուր , թեթեւ ու պայծառ ըլլայ ։

Զարհաղանց աշխատութենէ , ետքը , անմիջապէս կերակուրի նստիլը , նոյնպէս ուտելէն անմիջապէս ետքը աշխատութեան սկսելը մեծապէս կվնասէ ։ Ա.յս մասին անուշադիր եղողներուն շատերը վինչև անգամ մեռած են ։

2 · Ակռաներըը մաքուր պահելու համար ի՞նչ պէտք է ընել ։

— · Գանոնք մաքուր և հետևաբար առողջ պահելու համար , բաւական՝ է որ ամեն կերակուրէ վերջը բերանը պաղ ջրով լուացուի , զի կերակրոց կըմորուանքն ակռաներուն մէջ տեղերը երթալով կխոտին և այնպիսի կաղերու ծնունդ կուտան , որ ակռաներն սեպրնելէ , փտեցնելէ զատ , ընկաւութիւնը , գարշահոտութիւն մը կտանայ ։ Եթէ միանակ պաղ ջուրը չգաւէ քիչ մը փռնգայող տնկային ածուխի փոշիով մաքրելու է ։

Ակռաներն առողջ պահելու համար պաղն և տաքն աղբեցութենէ ու շաղիը ըլլալու է ։

Ծխախոտ ծամողներ զանոնք կմաշեցնեն ,

կանգնել և միանգամայն բերանը կհոտեցընել ։

Այս և այսր նման առողջական սովորութեանց պէտք է մատղաշ հասակէն սովորիլ ։ Ծնողք, որք զաւակաց հայելիներն են, եթէ անոնք կրսեմ, առողջական այս ամենապարզ կանոնաց տգէտ ըլլան, անշուշտ իրենց զաւակներն ալ իրենց պիտի նմանին ։ Ի՞նչ դժուարութիւն կայ ամեն կերակուրէ ետքը ակռաները պաղ ջրով լուանալուն մէջ . ոչ ծախսի կկարօտի և ոչ ժամանակի կորուստ կպատճառէ . այն պիսիք մարդերնին բերելու են որ այսպիսի ամենադիւրին և ամենապարզ կանոններուն ուշադիր չըլլալովնին , օրըստ ցաւեր , վիշտ և տառապանք կքաշէն իրենց կենացը մէջ և դեռ չծերացած բերաննուն մէջ ակռայ չմնար , որոնց գոյութիւնը անհրաժեշտ պէտք է ըլլի մարսողութիւնը դիւրացնող առաջին գործիքներն են , և եթէ այս ընթացքին մէջ եղած ծախքին ու ժամանակի կորուստին հաշոյն ցուցակը երևակայել ըլլանք , անտարակոյս պիտի զարմանանք ու ցաւինք ։

Ահա այս հանառօտ դիտողութիւններս կապացուցանեն թէ օրըստ օգտակար է մարդուս Առողջաբանական դիտութիւնը , դիտութիւն մը որ կսովրեցնէ մարդուս կենաց գինը , անոր տեղապահութիւնը համառօտապատճառներէն հետու կենալով , զանի երկարցնող պատրաստութիւնները ճանչնալ . այս դիտութեամբ է որ մարդս իր ամեն տեսակ պարտաւորութիւնները ըստ պատշաճի կկատարէ ։ Երանի թէ մեր այս դիտողութեանց ուշադիր եղողներ գտնուէր . . ։

ԱՒՄՈՒՏՆԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

ՀԱՏՈՒԱԾ ։

Հաւատք բառը , իր ամենապարզ նշանակութեանը մէջ հաւատարմութիւն , վստահութիւն ըսել է ։ Իսկ կրօնական հաւատքն է դարձեալ մի և նոյն հաւատարմութեան , վստահութեան մէկ մասնաւոր ձևը որ կվերաբերի Աստուածութեան ։ Եւ մարդկային հաւատքն է վստահութեան ու հաւատմութեան զանազան ձևերուն քովնդակութիւնը , որ ծնունդ կառնուն մարդոց կարծիքներէն ։ Մեկ խօսքով հաւատքն է ուրիշին հաւատալու , վստահելու կարողութեան գործադրութիւնը ։

Այս կարողութիւնը ծնունդ առած է մարդուս այն զանազան զգացողութիւններէն , որոնցմով որևիցէ բան մը վրայ մեր ուշադրութիւնը կգրաւեմք ։ Ուսկից կհետևի մարդկային բնութեան պահպանութիւնը , կատարելագործութիւնը և յառաջադիմութիւնը ։

Երբոր մարդս տգէտ է , փորձառութեան կկարօտի , եթէ փորձառու ալ չէ , կպարտաւորի ուսանիլ , որովհետև " Մարդս՝ անանոց նման բնական դրդում չունի ,, ։ Եւ որևիցէ գործողութիւն մը ընտրելու , վճռելու համար պատճառ մ՝ ըլլալու է ։

Ուստի մարդս ալ անասունին բնական ղրդման նման , պէտք է որ խումբ մը պատճառներ պատրաստ ունենայ , առանց սկզբին ու վախճանը խորհելու այս ինչ կամ այն ինչ գործը ընելո-

1 Տես Թիւ 8 էջ 93 ։

համար ։

Այսոր համար է որ, երբ որևիցե մեկին կամ տղայ մը այն ինչ սրհեստն սովրելու առեն, այս կամ այն դրուագ թեամբ հետևելու համար, խումբ մը պատրաստ պատճառներ ունենալու է, առանկով վարպետին ըսածին հաստատ կսկսի, բայց երբոր վարպետնաչ տգետ է, թշուառ է աշակերտն ։

Երբոր մարդ մը ճանապարհորդութեան կելլէ, եթէ երթալու տեղն չգիտե թէ աշխարհագրական տախտակներով և թէ փորձով, ասոր անոր հարցնելով, զանի սովրիլ կտիպուի, զի համոզուած է որ ինքն՝ անասունի նըմանն բնական դրդմամբ, կրնար իր ճամբան գտնել, զի և ահա բազում պատճառներու պէտք ունի աչ կամ ձախ երթալու ։

Եւ անտառին մէջ գտնուած ատեն, իրեն գեմ ելլող մեկ քանի ճամբայներ կելնեն ։ Եւ հոն գտնուող վայտահարին կը հարցնէ ալ նէ, այն ալ իրեն նման ըլլալով, այն մեկ քանի ճամբայներէն միայն մեկը աղեկ համարելով զանի կցուցնէ, առանց հաստատ որոշման. ճամբորդը զիւղացիին խօսքին հաւատալով դէպ ի այն ճամբան կուզղուի ։

Եւ ահա այսպիսի պարագայից մէջ ամենէն դիւրին միջոցն ալ այս է, բայց թէ որ փայտահարն նոյն ինքն ըսածն չգիտե կամ թէ ծաղրել ուզէ, ի՞նչ կրլլայ խեղճ ու թշուառ ճանապարհորդին վիճակը ։

Մարդուս զգացողութիւնները միշտ հաւատալու ենթակայ և յարմար են, և ընդհանրապես որչափ այն զգացողութիւնները առոյգ ըլլան այնքան ալ հաւատալու յատկութիւնն արթուն կրլլայ ։

Որևիցե բանի մը հաւատայն անփորձ ու տգետ մարդոց աւելի դիւրին է ։ Այսպիսեաց համար հաւատալն ոչ այնքան դժուար և ոչ այնքան փափուկ է ։ Կրնանի այնպիսի ախորժակի մը որ ամեն տեսակ կերակուր կրնայ մարսել ։

— Զորօրինակ տղայ մը երբոր հարցնէ թէ ո՞վ է աշխարհիս Ստեղծիչը և պատասխանուի թէ Յունաց և Հռովմայեցւոց Աստուածը, Ժիւբիթեռն է, գոհ պիտի ըլլայ ու հաւատայ ։ Թէ որ ըսուի թէ վհուկ մեկ, անտարակոյս անոր ալ պիտի հաւատայ, կամ թէ որ ըսուի թէ մեկն ալ չէ զանի ստեղծողն. ի սկզբան եր գոյ, դարձեալ պիտի հաւատայ և քանի որ տղուն այս մասին վերայ ունեցած համոզումը և հաւատքը խանգարող և հարցնող չգտնուի, հանդարտ պիտի մնայ թէ այս, այսպէս է ։ Բայց իրեն պատասխանուի թէ, տղաս, այսպիսի ամենաբարձր խնդիր մը մեկ քանի բառերով մեկնելն անկարելի է, նախ պէտք է որ սովրիս թէ ի՛նչ է աշխարհն ու բոլոր տիեզերս ։ Պէտք է որ դեռ շատ բան սովրիս ու կարդաս. յետոյ պիտի կարող ըլլաս հասկնալ բոլոր այն գիրքերը, որոնցմով պիտի սովրիս ու հասկնաս թէ բոլոր փիլիսոփայք այս ամենաբարձր խնդրոյն համար ի՛նչ կարծիք ունին և ի՛նչպէս զանի կմեկնեն, կարելի է որ այս անգամ առաջին կամ վերջիշեալ պատասխաններուն չափ գոհ ըլլայ, բայց դարձեալ ասոր ալ պիտի հաւատայ և որուն վրայ շատ անգամ մտածելով, կարդալ սովրելու ուսնեցած սէրը պիտի աւելցնէ ։

— Ընդհակառակ երբոր մայր մը բսէ աղջկանը թէ բոլորովին օտար անձի մը հետ պտըտելն, մինակ պտըտելեն շատ գեշ է, անպատուհաս բան է, և որևիցե մեկուն առանց մորը գիտութեան նամակ խաբրեն, պարկեշտութեան և բարոյականի գեմ է ։

Պիտի պատասխանէ թէ մայրիկ,

երեկ ժամ մը այս ինչ մարդուն հետ մինակ ատեն անցուցիր , և այս առաւօտ այն ինչին հետ խօսք ըսիք , որ վաղը ժամը 2½ին պտըտել պիտի ելնէք , առջի օրնալ այն ինչէն նամակ ընդունելուդ և առանց մեծ մորը ցուցնելու պատասխան խաւրեցիր : Մայրը կը պատասխանէ թէ աղջիկս , իմ ու քու մէջ մեծ տարբերութիւն կայ , զի ես ա մեռանցեալ եմ : Այս պատասխանին վրայ գոհ կըլլայ աղջիկը և ըսածին կհաւատայ , զի մայրն է ըսողը :

Ամերիկայի միացեալ նահանգաց մէջ սովորութիւն է ըսել աղջկանց թէ " երբոր ամուսնանաս , կպարտաւորիս միշտ տանդ մէջ կենալ և զաւակացդ խնամել , ուստի ի՞նչ կընաս , ըրէ այս աղատութեանդ մէջ , մարդիկ գոնէ զբօսնէ անոնց և պատասխան ընդունէ և թէ որ կուզես առանձնակի խօսէ անոնց հետ : Աղջիկները այս խօսքերուն հաւատալով , բոլորովին օտար մարդոց հետ ոչ միայն առանձնակի կխօսակցին , այլ մինչև անգամ երկայն ճամբորդութիւններ կընեն , նամակ կգրեն ու կընդունին և ոչ մէկը քան մը կըսէ :

Քաղաքացի կնոջ մը տղան հիւանդանալով , մայրը կըսէ թէ աղի ջրով լուայ զանի , շատ աղէկ է , խեղճ կինը այս խօսքին հաւատալով հիւանդ տըղան աղի ջրով կլուանայ : Ուրիշ ծեր կին մը կուգայ և կըսէ թէ , այծին կաթին մէջ սոխ մը դիր ու խմէ , որուն ջուրը խմել տալվէ մեծ օգուտներ պիտի դալէ տղադ : ասոր ալ հաւատալով , ըսածը կընէ :

Ասանկով խեղճ տղան աւելի կը ծանրանայ , որուն վրայ կըսեն թէ " զբօսնա գոնէ այն ինչ տեղը գոնուող կաղ հովիւը , կերթայ զանի գտնելու , հովիւն ալ զանի աղօթելէն վերջը երկաթ մը կուտայ և կըսէ թէ դուն վրայ խօթէ և տեսնես թէ քանի որ խորունկ մըտնէ այնքան տղան պիտի աղէկնայ . խեղճ կինը միամտաբար հաւատալով զանի բոլորովին կսխմէ , բայց տղան աւելի ևս կհիւանդանայ :

Դրացիներէն մէկն ալ կըսէ թէ ամենէն աղէկ միջոցն է այսպիսի պատգայից մէջ բժիշկի դիմել . ասոր խօսքին ալ հաւատալով բժիշկ կբերէ և բոլոր եղելութիւնը պատմելէն վերջը , բժիշկը կպատասխանէ թէ աղով ջուրը այծի կաթով օգնէ , և կաղ հովիւը , տղան հիւանդութիւնը ծանրացուցած են , որուն պէտք էր միայն մաքրողական դեղ մը և առողջանական խընամքներ . և հիմայ խեղճ կինն , զաւկիդ դարմանն ընելու ժամանակն անցեր է , և հաղիւ թէ մէկ , երկու ժամ ապրի :

Այս խօսքերուն վրայ խեղճ կինը աճապարանօք եկեղեցի կվազէ , երեք ճրագ վառելով կաղօթէ և վերադարձին տղան մեռած կգտնէ :

Ահա բոլոր այս պարագաներուն մէջ , ամենուն խօսքն ու ըսածը ըրաւ , հաւատալով և համոզուելով որ ամենուն ըսածն ալ ճիշդ և օգտակար էր :

Ինչպէս որ տղան իր հարցմանը առած ամեն պատասխաններուն կը հաւատայ , նոյնպէս աղջիկներնալ իրենց քաղաքական սովորութեանց կհաւատան :

Հիւանդ տղան մայրն ալ , իր մորը , դրացիին , հովիւին . . . մինակ բժիշկն իրեն աղէկ էրևցաւ , զի ըսելէ հաւատալ երբոր ըսաւ թէ տղադ պիտի մեռնի :

Սխամիա մարդոց հաւատքը զամբիւղն կնմանի , որուն մէջ ուզածդ կընաս գնել , մանաւանդ երբոր աղէկ երևնայ , թէ սխալ և թէ ճիշդ , բաւական է որ հաճոյ երևին : Սկսիլ ի զատ սխալ կամ ուղիղ , պետք է որ զամբիւղն լեցնայ , որովհետև ապացուցանելով լսինք , որ մարդիկ առանց մտածելու չեն շարժիր :

(Շարունակելի) :